րին: Նայեց դրան ճակատին եւ սոսկաց··· Դրան ճակատը պատած էր սեւ պաստառներով, իսկ վերեւում փողփողում էին երկու սեւ դրօշակներ: Այդպէս անում էին միայն այն ժամանակ, երբ երկրի իշխանի դագաղն էին ներս տանում···

··· Ուրախ, աղմկալի Հաղամակերտը ներկայացնում էր մի մեռեալ քաղաք··· Ոչ մի ձայն··· ոչ մի շշունչ անգամ չէր խռովում ընդհանուր գերեզմանական լռութիւնը:

··· Նա հասաւ իշխանական ապարանքը, բայց դռներր իւր առջեւ փակուած գտաւ:

··· «Ուրեմն ինձ մերժում է եւ իմ տունը եւ իմ ընտանիքը»··· մտածեց նա խորին, սրրտատոչոր դառնութեամբ:

Այստեղ եւս նոյն տխուր, նոյն յուսահատական տեսարանը··· Իշխանական հոյակապ դռան փառաւոր կամարները պատած էին սեւ պաստառներով, իսկ նրա աջ եւ ահեակ կողմերում փողփողում էին երկու սեւ դրօշակներ:

Անհնարին խռովութեան մէջ՝ կանգնած էր նա հայրենական տան մուտքի առջեւ եւ չգիտէր ի՞նչ անել: Այդ ահարկու մարդը, որի համար աշխարհում ոչինչ դժուարութիւններ, ոչինչ արգելքներ չկային, այժմ գտնվում էր մի բոլորովին եւ յուսակտուր դրութեան մէջ···

··· Դռան բարձրութեան վրայ··· վարագոյրները յետ գնացին, վերեւում յայտնուեցաւ մայրը··· Նրա ձախ թեւքին բռնել էր աղջիկը — Մերուժանի քոյրը — իսկ աջ թեւքից բռնել էր հարսը — Մերուժանի ամուսինը: Վերջինի առջեւում կանգնած էին Մերուժանի երկու զաւակները··· Դրանց ետեւում··· իշխանական ամբողջ ընտանիքը: Ամէնքը սգաւորի հագուստով··· Մերուժան ամբողջ մարմնով դողաց:

— Մայր — խօսեց նա խռովեալ ձայնով — իմ քաղաքացիները ինձանից երես դարձրին, այժմ իմ հայրենական տո՞ւնն էլ իր դռները փակում է իմ առջեւ:

— Այո՛, Մերուժան — պատասխանեց վերեւից մայրը··· — քո հայրենական տունը իր դռները փակում է քո առջեւ, որովհետեւ դու քո սրտի դռները փակեցիր թէ՛ Աստուծոյ, թէ՛ քո հայրենիքի եւ թէ՛ քո խղճի առջեւ··· Ուրացողը չէ կարող մտնել այդ տունը, Մերուժան: Այն օրից, որ դու դաւաճանեցիր քո եկեղեցուն եւ քո թագաւորին, այն օրից զրկուեցար այդ տան զաւակը լինելուց··· Դու այժմ այդ տան համար խորթ ես եւ օտար, որովհետեւ դու արատաւորեցիր Արծրունիների պայծառ յիշատակը··· Դարձի՛ր չար ճանապարհից, դարձիր քո մոլորութիւններից··· Լսի՛ր, Մերուժան մօր ձայնը, որ դեռ սիրում է քեզ··· Լսիր մօր ձայնը, որովհետեւ նրա բերանով խօսում է ամբողջ Վասպուրականը··· Քո հայրերը, երբ յոգնած, վաստակած տուն էին վերադառնում պատերազմներից, նախ գնում էին եկեղեցին, գոհութեան աղօթք էին մատուցանում եւ ապա գալիս էին իրենց ընտանիքի սէրը վայելելու··· Եթէ դու քո նախահարց հարազատ որդին ես, հետեւիր նրանց օրինակին··· Այնտեղ, Մայր-եկեղեցում, քահանայական դասը եւ քո քաղաքի ծերերը սպասում են քեզ··· Գնա՛, Մերուժան»···

*Մերժեց մօր խնդիրքը, եւ մենակ, լքուած բոլորէն, երկար թափառումներէ յետոյ, գնաց նստեցաւ ժայռի մը վրայ, իր լայնատարած իշխանութեան կտոր մը քարի վրայ, որպէս փախստական, «որպէս մի թշուառ արտաքսեալ, որ իւր սեպհական երկրի վրայ իր ոտքը դնելու մի հաստատ կռուան չունէր»··· Ապա···*

*Ցած իջաւ ժայռէն, կանգ առաւ եւ աչքերը դէպի երկինք դարձնելով, այսպէս խօսեցաւ·*

«Ի՞նչը ձգեց ինձ այս թշուառ դրութեան մէջ: Արդեօք փառասիրութի՞ւնը··· Ո՛չ, հազար անգամ ո՛չ··· Հայոց գահը, Հայաստանի թագն ու գաւազանը, որ խոստացաւ ինձ պարսից Շապուհ արքան երբեք չէին կարող հրապուրել ինձ··· անարգ գործիք դարձնել ինձ պարսից արքայի ձեռքում··· Ես աւելի մեծ յօժարութեամբ կ'ընդունէի մահը եւ իմ պատիւը ինձ հետ գերեզման կը տանէի, քան թէ իմ ճակատի վրայ կ'ընդունէի դաւաճանի սեւ կնիքը···

Ի՞նչը հարկադրեց ինձ ուրանալ իմ Աստուծուն, ուրանալ հայրենական կրօնը, ուրանալ մէն ինչ, որ նուիրական էր ինձ համար եւ երկրպագութիւն տալ պարսից աստուածներ-